

Հեռագրաւ երգ երգել .

Անդդիոյ մէջ տեսակ մը ելեքտրա-
կան հեռագրութիւն հնարուեցաւ, ու
րով կրնան մարդիկ մէկ աշխարհէ ու-
րիշ աշխարհ, որչափ այլ հեռաւոր ըլ-
լայ՝ եղանակներ երգել :

Արուեստաւորը նուագարանին առ-
ջիկէն ալով կ'երգէ խողովակի մը մէջ
ուզած եղանակը . խողովակին բերնին
մօտ ձգտեալ մաշկ մը կայ որ երգուած
եղանակին համեմատ թրթռալով՝ հա-

ղորդիչ թելով մը կ'ազդէ նոյնպիսի
մաշկի մը իր ուզած հեռաւոր երկիրը :

Առջի մաշկին թրթռմանց թիւը ճիշդ
կը համեմատի թելով խրկուած ընթա-
ցող ելեքտրականին շարժմանցը զոր
կը հաղորդէ հակադիր մաշկին, որ ըն-
թացող զօրութեան ազդման տակ կ'ար-
ձըկէ այնպիսի ձայն մը, որ նման է եր-
գուած ձայնին : Անշուշտ քիչ ատենէն
պիտի կարենան մարդիկ հասարակ խօ-
սակցութեան կերպով իրարու հետ խօ-
սիլ աշխարհքիս մէկ ծայրէն մէկալ
ծայրը :

Խ Ա Ն Դ

Քընար ի գիրկ վերամբարձ, մատունք ի լար յարդարուն
Ես ձայն առ քեզ արկանեմ աստուածեղէն շունչ խօսուն .

Ո՛վ ազդումն անճառ ,

Ծընունդ արփեաց վառ :

Զոսկեճաճանչ լոյծ ըզթեւս՝ ճախր ի թրուիչ հար աղէ ,
Մատիւր ի լուռ յայս քընար . յեռանդ ջերոտ զարթիցէ .

Եւ լարք բախեսցին

Ի նուագ սիրային :

Պուրակագեղ լուռ անտառ սաղարթագլուարճ ի ստեղունս ,
Դաշնակաւոր հարկանէ սարսափաձայն քաղցր հընչմունս .

Զի շընչեաց հեղիկ

Զեփիւռ քաղցրասիւք .

Որ ի զըւարթ քըրքմացան , յարևածայր ծիրանի ,
Սաւառնաթեւ էջ ի նա , փարեալ զոստովք դալարի ,

Եւ մեղմիկ ի կոծ

Սարսեն սաղարթք հոծ :

Թըռչուն ընդ օդ թեւահերձ անդ ի ճախրանս բազմախաղ .
Նըւագ ի նուագս յեղյեղեալ եղանակէ գեղգեղ տաղ .

Մերթ յոստին թառել ,

Մերթ բարձր ի վերել :

Ո՛ր սըրտեռանդ շունչ յորդոր եւ զինչ ոգի երգահան ,
Ի գիրդ լանջին փափկասուն եւ փոքրատար դոյզն յաման ,

Դիւրագգած սըրտին ,

Կակուղ սոսորդին :

Բայց թէ աւին երկնածիր որ յամենայն ծաւալեալ,
Սըրտին ոգւոցն ի մասունս, բըբաղն յայդուն լոյս բանալ
Թեւոցն ի կայտիւ,
Հողաթեւ ի թիւ :

Էջ ծաւալեաց եւ դու յիս, իմոց մըտաց թըռիչ սուր,
Թեւս յօրինեաց պընդակազմ յանհոսելի կուռ փետուր,
Քան ի կըրետայ
Խուսելում բացեայ,
Ըզտարրեղէն թեւս ի հիւս, որ յընթացից միջակէտ,
Լուծեալ փետրոց յանկարծոյն, յալեաց ծովուն խորս անհետ
Եւ ըզկենացն հէք
Մերկացաւ զարեգ :

Ե՛կ շունչ շընչեաց ի մեռոտ կիսակենդան սըրտի հուր,
Որ ըզմոխրոյն կոյտ ցըրտին թօթափելով առաթուր,
Բորբոքեալ որպէս
Փայլակ բոցակէզ .

Ոլորտասցի թափ ի վեր ուր գումարտակ կուռ ամպոց,
Թաւալեսցին ի ներքոյ կայծակնացոլ վառ հետոց .

Ու արծիւ բարձրաթիւ,
Կըրթեսցի յաթիւ :

Որպէս յանդունդ խոր Հանդրին տարտամ ի ծուփ լաստ թափառ,
Առադաստիցն արձակեալ եւ կան ի կախ շնչատպառ,
Եւ ահա հիւսիս,

Վազեալ ընդ ալիս,

Փըչէ ի թեւսըն թափուր եւ գողալից ուռուցիկ,
Վարեն յառաջ զլաստափայտ, շուրջ վէտ ի վէտ կոր ալիք,
Քըրտնին զըսպիտակ,
Փըրփուրն ի կուտակ :

Քեւ իսկ հանգոյն թեւազգեաց խըրոխտալիր ի թըռչան,
Սիրտ յարփենեաց ի գաւառ, յաստեղազարդն յանդաստան
Ճախըսցի թափանց
Յայերս յայերաց :

Քեզ կայ քընար՝ խանդ հրաշունչ, յարփւոյն ծագել ի բարձունս,
Նորանըշոյլ մինչ ճաճանչք յոսկեթաւալ ի զեղմունս,
Զոլորտիւք սըփոին
Երկրի եւ զերկնին :

Սարք պաղպաղեն բարձրաբերձ, լերինք, բըլուրք ըզգենուն
Ըզծիրանիս կարմրերփեան, պըճնին հովիտք հովասուն,

Շըպարին ծաղկունք

Գեղանի զարդուք .

Եւ դաշտային մինչ հաւուց խայտանըկար պարք ողջոյն ,
Քաղցրամըմունջ այգորեն զերկնից դըրունս վարդագոյն .

Եւ յարօտ ծաղկեայ

Զով հողմիկ խայտայ :

Առ ճախրահոս ջինջ աղբեր եւ առ վըտակըն վըճիտ ,
Ոլորտաճեմ, հեղասահ ընդ տունկ եւ բոյս խիտ առ խիտ .

Առ եզր արծաթի ,

Անդորր լըճակի .

Անդ անսայ քեզ , էջ մատիր եւ ի ներքոյ հովանուտ ,
Թանձրամայրի անտառաց , առ ուղէշիւք դալարուտ .

Զովագին յեմակս ,

Մարդաց ի դաշտակս :

Իսկ մօտալուտ , վերահաս յերեկորոյն ժամանել ,
Ո՛վ եւ քանի համառօտ մեզ տիւ չափեալ ի վայել ,

Առ խոնարհ մըտիւք ,

Կարմիր դըրօշիւք ,

Աղօտափայլն արփենւոյն որ թանգուղի յալիս լուրթ .

Անդ անձկայրեաց հուսկ նըլագ քեզ կայ քընար սըրտաթունդ .

Առ ափամբ անհուն

Լայնածիր ծովուն .

Ուր դամ մի եւս հարեալ յերգ խոր՝ մըրմընջին ներդաշնակ ,
Որպէս թըռչուն անցաւոր ընդ թախծադէմ կապուտակ ,

Մըրմընջեալ զերկայն

Գեղգեղ քաղցրաձայն՝

Թեւակոխէ յանուշակ , գեղանըսի՜ յանքոյթ թառ .

Հանգիւր եւ դու խանդ աշխոյժ եւ հանգիցէ խոնջ քընար

Աստեղց ի շառայլ

Լուսնին գեղափայլ :

* *

